«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծեր

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ»

ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի հունիսի 5-ի ՀՕ-337 օրենքի 48-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3. Սույն հոդվածի 1-ին մասում նշված լիազորությունների իրականացման համար համայնքի աշխատակազմում ստեղծվում է համայնքի սոցիալական աշխատանքի մասնագետի հաստիք հետևյալ չափաքանակով՝

- մինչև 2000 բնակիչ ունեցող համայնքում՝ համայնքի ղեկավարի առաջարկությամբ ավագանու որոշման համաձայն՝ մեկ հաստիք.
- 2001-ից մինչև 7000 բնակիչ ունեցող համայնքում առնվազն մեկ հաստիք.
- 7001-ից մինչև 15 000 բնակիչ ունեցող համայնքում առնվազն երկու հաստիք.
- 15001 և ավելի բնակիչ ունեցող համայնքում՝ առնվազն երեք հաստիք։ Համայնքի սոցիալական աշխատանքի մասնագետի հիմնական իրավունքներն ու պարտականությունները սահմանված են «Սոցիալական աջակցության մասին» օրենքով։»։

Հոդված 2. Համայնքի սոցիալական աշխատանքի մասնագետի հաստիքի ստեղծմամբ կամ թվի ավելացմամբ պայմանավորված համայնքների ծախսերի ավելացումը ենթակա չէ փոխհատուցման պետության կողմից։

Հոդված 3. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ»

ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2009 թվականի հունվարի 15-ի ՀՕ-5-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 63-րդ հոդվածը լրացնել նոր 3-րդ մասով հետևյալ բովանդակությամբ՝

«3. Սույն հոդվածի 1-ին մասում նշված լիազորությունների իրականացման համար համայնքի աշխատակազմում ստեղծվում է համայնքի սոցիալական աշխատանքի մասնագետի առնվազն մեկ հաստիք յուրաքանչյուր 15000 բնակչի սպասարկման համար։ Համայնքի սոցիալական աշխատանքի մասնագետի հիմնական իրավունքներն ու պարտականությունները սահմանված են «Սոցիալական աջակցության մասին» օրենքով։»։

Հոդված 2. Համայնքի սոցիալական աշխատանքի մասնագետի հաստիքի ստեղծմամբ կամ թվի ավելացմամբ պայմանավորված համայնքների ծախսերի ավելացումը ենթակա չէ փոխհատուցման պետության կողմից։

Հոդված 3. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։